ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Ծաղկաձորի համայնքապետարանը ստորև ներկայացնում է իր կարիքների համար Ծաղկաձոր համայնքի ներկայացված փողոցների կոյուղագծերի կապիտալ վերանորոգման, նոր կոյուղագծերի կառուցման աշխատանքների նախագծման խորհրդատվական աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված **<<ԾՔ-ԳՀԽԱՇՁԲ-20/18>>** ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում **2020 թվականի դեկտեմբերի 30-ին** կնքված N **<<ԾՔ-ԳՀԽԱՇՁԲ-20/18>>** պայմանագրում **2021 թվականի հունվարի 22-ին** կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ: Պայմանագրով սահմանվել է, որ աշխատանքների կատարումն իրականացվելու է այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու և կողմերի միջև համապատասխան համաձայնագիր կնքվելու դեպքում:

Փոփոխության նկարագրություն: Աշխատանքների կատարումն իրականացվելու նպատակով նախատեսվել են համապատասխան ֆինանսական միջոցներ և կողմերի միջև կնքվել է համապատասխան համաձայնագիր:

Փոփոխության հիմնավորում: Համապատասխան ֆինանսական միջոցների առկայություն, Պայմանագրի 7.5 և 7.15 կետեր :

Պատվիրատու՝ Ծաղկաձորի համայնքապետարան